ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«11» ՄԱՅԻՍԻ 2021ԹՎԱԿԱՆԻ N 134

ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2021Թ-Ի ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱՀԱՇՎՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության Բյուջետային Համակարգի Մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով *որոշում եմ՝*

Կոտայքի մարզի Գառնի համայնքի 2021թ. բյուջեի նախահաշվում կատարել վերաբաշխում համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. մայիսի 11

գ.Գառնի

ՀԱՎԵԼՎԱԾ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ 2021ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-Ի
N 104 ՈՐՈՇՄԱՆ

1. 08.2.3. նախահաշվի 5113 հոդվածի 2-րդ եռամսյակից 1613.0 հազ. դրամ տեղափոխել
   09.5.1. նախահաշվի 5113 հոդվածի 2-րդ եռամսյակ:
2. 08.2.7. նախահաշվի 4251 հոդվածի 3-րդ եռամսյակից 80.0 հազ. դրամ տեղափոխել
   02.2.7. նախահաշվի 4251 հոդվածի 2-րդ եռամսյակ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«13» ՄԱՅԻՍԻ 2021ԹՎԱԿԱՆԻ N 135

ՌՈԲԵՐՏ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՎԵԼԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով Ռոբերտ Անուշավանի Բաղդասարյանի դիմումը, համաձայն << Ինքնակամ կառուցված շենքերի շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին >> 2002 թվականի դեկտեմբերի 26-ի Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, նկատի ունենալով այն հանգամանքը, որ Ռոբերտ Անուշավանի Բաղդասարյանին հատկացված հողամասից կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվառված, ավել օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակության օգտագործելու համար, այն ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, չի ընդգրկված ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության, ինչպես նաև հնագիտական պատմամշակույթային հողերի պահպանման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմաներին, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, չի առաջացնում սերվիտուտ *որոշում եմ՝*

1.Ճանաչել Ռոբերտ Անուշավանի Բաղդասարյանի սեփականության իրավունքը ըստ կադաստրային քարտեզագրման արդյունքի, կադաստրային 07-021-0376-0063 ծածկագրով փաստացի օգտագործվող 0.5050 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողի նկատմամբ, որը փաստացի օգտագործվել է նրա կողմից մինչև 2001 թվականի մայիսի 15-ը

2. Հողամասի սահմանները որոշվում է որակավորում ստացած չափագրողի կողմից չափագրված, Գառնի համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:

3.Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի միավորված մարզերի ստորաբաժանմանը կատարել գրանցում քաղաքացու սեփականություն համարվող հողամասի նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքով գրանցված վկայական:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. մայիսի 13

գ.Գառնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«13» ՄԱՅԻՍԻ 2021ԹՎԱԿԱՆԻ N 136

ՌՈԲԵՐՏ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով Ռոբերտ Անուշավանի Բաղդասարյանի դիմումը, համաձայն << Ինքնակամ կառուցված շենքերի շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին >> 2002 թվականի դեկտեմբերի 26-ի Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, նկատի ունենալով այն հանգամանքը, որ Ռոբերտ Անուշավանի Բաղդասարյանին հատկացված հողամասից՝ կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվառված, ավել օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակության օգտագործելու համար, այն ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, չի ընդգրկված ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության, ինչպես նաև հնագիտական պատմամշակույթային հողերի պահպանման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմաներին, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, չի առաջացնում սերվիտուտ *որոշում եմ՝*

1.Ճանաչել Ռոբերտ Անուշավանի Բաղդասարյանի սեփականության իրավունքը ըստ կադաստրային քարտեզագրման արդյունքի, կադաստրային 07-021-0376-0065 ծածկագրով փաստացի օգտագործվող 1.1287 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողի նկատմամբ, որը փաստացի օգտագործվել է նրա կողմից մինչև 2001 թվականի մայիսի 15-ը

2. Հողամասի սահմանները որոշվում է որակավորում ստացած չափագրողի կողմից չափագրված, Գառնի համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:

3.Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի միավորված մարզերի ստորաբաժանմանը կատարել գրանցում քաղաքացու սեփականություն համարվող հողամասի նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքով գրանցված վկայական:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. մայիսի 13

գ.Գառնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«17» ՄԱՅԻՍԻ 2021ԹՎԱԿԱՆԻ N 137

ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿՏԱՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՓԱՍՏԱՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՉԱՓՈՎ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասի իրավական կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության 2002թվականի դեկտեմբերի 26-ին ընդունված օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի ա) ենթակետի դրույթներով, հաշվի առնելով, որ օրինական հատկացված տնամերձ հողամասին կից ինքնակամ զբաղեցրած հողամասը և օրինական հատկացված հողամասը մինչև 2001թ-ի մայիսի 15-ը ունեցել է նույն սահմանագիծը և փաստացի օգտագործել և մինչ օրս օգտագործվում է համասեփականատերերի կողմից, քարտեզագրվել և նույն սահմանագծով ճանաչվել է որպես մեկ միավոր ինչը երևում է համայնքի հողակադաստրային քարտեզում և այն որ օրինական և նշված ինքնակամ զբաղեցրած հողամասը չի գտնվում հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամասերի շարքում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակվում այլ անձանց իրավունքները, չի առաջացնում սերվիտուտ, ***որոշում եմ՝***

1. Խորեն , Վերգուշ , Գարեգին , Գալուստ Սարգսյանների կողմից փաստացի օգտագործվող 0.25007 հա հողամասի ծածկագիր 07-021-0065-0006 սեփականության իրավունքը ճանաչել ամբողջությամբ:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:
3. Ուժը կորցրած ճանաչել Գառնի համայնքի ղեկավարի 2019թվականի ապրիլի 17-ի թիվ 100 որոշումը

Համայնքի ղեկավար՝ **Ա. Մահակյան**

2021թ. Մայիսի 17

գ.Գառնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«17» ՄԱՅԻՍԻ 2021ԹՎԱԿԱՆԻ N 138

ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ Խ. ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 78 ՀԱՍՑԵՈՒՄ ԽՈՐԵՆ, ՎԵՐԳՈՒՇ, ԳԱՐԵԳԻՆ,ԳԱԼՈՒՍՏ ԵՎ ՍԱՀԱԿ ՍԱՐԳՍՅԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006թ-ի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 10.11.22 կետերի պահանջներով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Խորեն, Վերգուշ, Գարեգին, Գալուստ և Սահակ Սարգսյանների համասեփականության իրավունքով պատկանող, Կատայքի մարզի Գառնի համայնքի Խ. Աբովյան փողոց թիվ 78 հասցեում տնամերձ հողամասում ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումների և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք ***որոշում եմ՝***

1.Խորեն, Վերգուշ, Գարեգին, Գալուստ և Սահակ Սարգսյանների. համասեփականության իրավունքով պատկանող տնամերձ հողամասի վրա 1964թ.,1970թ,1987թ.1991թ. ինքնակամ կառուցված բնակելի նշանակության շինությունները ճանաչել օրինական:

2. 2003թ. և 2008թ.կառուցված արտաքին մակերեսով 5.7 քմ, բնակելի նշանակության օժանդակ շինությունը ճանաչել օրինական համայնքապետարանի համապատասխան հաշվին (5.7քմ)*6000*0,11=3762 ՀՀ դրամ Ինքնակամ կառուցված թվեվ 7 դռների և պատուհանների համար 7*10000*0.11=7700 ՀՀ դրամ Ընդամենը 3762+7700= 11462 ՀՀ դրամ մուծելուց հետո

3. Ուժը կորցրած ճանաչել Գառնի համայնքի ղեկավարի 2019թվականի ապրիլի 17-ի թիվ 101 որոշումը

3.Որոշումն ուժի մեջ է ընդունման պահից:

/Համայնքի ղեկավար՝ Ա. Կոտակյան

2021թ. Մայիսի 17

գ.Գառնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«17» ՄԱՅԻՍԻ 2021ԹՎԱԿԱՆԻ N 139

ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ Խ. ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 23 ՀԱՍՑԵՈՒՄ ԽՈՐԵՆ, ՎԵՐԳՈՒՇ, ԳԱՐԵԳԻՆ,ԳԱԼՈՒՍՏ ԵՎ ՍԱՀԱԿ ՍԱՐԳՍՅԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006թ-ի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 10.11.22 կետերի պահանջներով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Խորեն, Վերգուշ, Գարեգին, Գալուստ և Սահակ Սարգսյանների համասեփականության իրավունքով պատկանող, Կատայքի մարզի Գառնի համայնքի Խ. Աբովյան փողոց թիվ 23 հասցեում տնամերձ հողամասում ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումների և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք ***որոշում եմ՝***

1.Խորեն, Վերգուշ, Գարեգին, Գալուստ և Սահակ Սարգսյանների. համասեփականության իրավունքով պատկանող տնամերձ հողամասի վրա. ինքնակամ 39.7 քմ 2021թ.կառուցված արտաքին մակերեսով 39.7 քմ, օժանդակ շինությունը ճանաչել օրինական համայնքապետարանի համապատասխան հաշվին (39.7քմ)*10000*0.1673=66419 ՀՀ դրամ Ինքնակամ կառուցված Ընդամենը 66419 ՀՀ դրամ մուծելուց հետո

2.Որոշումն ուժի մեջ է ընդունման պահից:

/Համայնքի ղեկավար՝ Ա. Մեհակյան

2021թ. Մայիսի 17

գ.Գառնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«17» ՄԱՅԻՍԻ 2021ԹՎԱԿԱՆԻ N 140

ԱՁ ԳԱՌՆԻԿ ԲԱԲԱՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով ԱՁ Գառնիկ Բաբայանի հայտը անդորագիր N 79 ***որոշում եմ՝***

Կոտայքի մարզի Գառնի համայնքի Գ. Մարզպետունի փողոց թիվ 14 հասցեում գործող ԱՁ Գառնիկ Բաբայանին տալ թույլտվություն 2021 թվականի հունվարի 01-ից մինչև սույն թվականի դեկտեմբերի 31-ը ոգելից և ալկոհոլային խմիչքների, ծխախոտի վաճառքի վերաբերյալ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. Մայիսի 17

գ.Գառնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

<<17>> ՄԱՅԻՍԻ 2021ԹՎԱԿԱՆԻ N 141

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔՆԵՐԻՆ ԱՆՎՃԱՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ԴԱՀԼԻՃՆԵՐ ԿԱՄ ԱՅԼ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն ընտրական օրենսգրքի 3-րդ մասի հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016թվականի հունիսի 17-ի N 22 -Ն որոշումը ***որոշում եմ***

1. 2021թվականի հունիսի 20-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին համայնքում անվճար հիմունքներով տրամադրել դահլիճներ և այլ շինություններ համաձայն հավելվածի:
2. Սահմանված ժամկետում որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. Մայիսի 17

գ.Գառնի

ՑԱՆԿ

Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրություններ

ընտրություններին մասնակցող կուսակցություններին,
կուսակցությունների դաշինքներին անվճար հիմունքներով տրամադրվող դահլիճների և այլ շինությունների

ԿՈՏԱՅՔԻ մարզ

հ/հ	**Դահլիճի, շինության անվանումը**	**Գտվելու վայրը (հասցեն)**	**Նստատե-ղերի թիվը**	**Տրամադրելու օրերը և ժամերը**	**Դահլիճը, շինությունը տնօրինող**	**Այլ նշումներ/հեռ.**
1	Գառնիի Գեղարվեստի դպրոց	Գառնի Ս. Շահումյան 11	70	յուրաքանչյուր օր	Համայնքապետարան	096233343
2	Գառնիի մարզամշակութային կենտրոն	Գառնի Ս. Շահումյան 6	400	յուրաքանչյուր օր	Համայնքապետարան	096233343
3						
4						

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

<<17>> ՄԱՅԻՍԻ 2021ԹՎԱԿԱՆԻ N 142

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի 18 հոդվածի 1-ին մասի, 104 հոդվածի 5-րդ մասի պահանջներով ***որոշում եմ***

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021թվականի հունիսի 20-ին կայանալիք արտահերթ ընտրությունների անցկացման համար Գառնի համայնքում սահմանել հետևյալ տեղամասային կենտրոնները

1) Գառնիի Ատոմի անվան թիվ 2 Ավագ դպրոցի շենք / Գառնի Ջ.Ալեքյան N52 հասցում /:

2) Գառնիի Գեղարվեստի դպրոցի շենք/ Գառնի Ստ. Շահումյան N11 հասցեում / :

3)Գառնիի թիվ 1 Հիմնական դպրոցի շենք / Գառնի Խ.Աբովյան N1 հասցեում /

4) Գառնիի Մարզամշակութային կենտրոնի շենք/ Գառնի Ստ Շահումյան. N 6 հասցեում /:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. Մայիսի 17

գ.Գառնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«19» ՄԱՅԻՍԻ 2021ԹՎԱԿԱՆԻ N 143

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գառնիի համայնքապետարան է դիմել քաղաքացի Վահան Ավետիսի Եղիազարյանը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Գառնի համայնքում գտնվող 07-021-0087-0027 կադաստրային համարի 2438.0 քառ.մետր մակերեսով բնակելի կառուցապատման կից, ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքի ձևով իրեն օտարելու համայնքային սեփականություն հանդիսացող 07-021-0087-0099 կադաստրային համարի բնակելի կառուցապատման ՝ 356.35 քառ.մետր մակերեսով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի առաջին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2021 թվականի մայիսի 17-ի թիվ 23-Ա որոշումը, ***որոշում եմ***.

1. Վահան Ավետիսի Եղիազարյանին սեփականության իրավունքով պատկանող Գառնի համայնքում գտնվող 07-021-0087-0027 կադաստրային համարի 2438,0 քառ.մետր մակերեսով բնակելի կառուցապատման կից՝ համայնքային սեփականություն հանդիսացող 07-021-0087-0099 կադաստրային համարի բնակելի կառուցապատման՝ 356.35 քառ.մետր մակերեսով հողամասը ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքի ձևով օտարել իրեն՝ կադաստրային արժեքով:

2.Սահմանել, որ հողամասի սեփականատերը սույն որոշման ընդունումից հետո, 15-օրյա ժամկետում Գառնի համայնքի բյուջեի N 900105207170 հաշվին պետք է վճարի հողամասի կադաստրային արժեքը, որը կազմում է 1029000 (Մեկ միլիոն քսանինն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունումից հետո, հողամասը ձեռք բերողի կողմից 15-օրյա ժամկետում վճարումը չկատարելու դեպքում՝ որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Ընդունել ի գիտություն, որ առուվաճառքի պայմանագրից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման անշարժ գույքի կադաստրի համապատասխան ստորաբաժանումում:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Լիպարիտ Թադևոսյանը:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Վահան Ավետիսի Եղիազարյանին որոշման ընթացքի մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ Ա. Սահակյան

2021թ. մայիսի 19

գ.Գառնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«20» ՄԱՅԻՍԻ 2021ԹՎԱԿԱՆԻ N 144

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՍԽԵՄԱՅԻ

Համաձայն <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով ***որոշում եմ՝***

Գառնի համայնքում Սաթենիկ Վրեժի Սևոյանի , Ազատ Հակոբի Սևոյանի , Նաիրուհի Հակոբի Սևոյանի և Գրիգոր Հակոբի Սևոյանի համասեփականություն համարվող տնամերձ հողամասի ծածկագիր 07-021-0090-0040 համաձայն բաժանման սխեմայի վերահաստատել :

S 1 = 0.093766 հա մասին գ.Գառնի Գեղարդի խճուղի թիվ 31/2

S 2 = 0.100522 հա մասին գ.Գառնի Գեղարդի խճուղի թիվ 31/3

Համայնքի ղեկավար՝ Ա. Սահակյան

2021թ. գ. մայիսի 20

Գառնի